


ԲԱՏՆԵՊԻՆ
Մ. ՆԱՀԱՆՊՈՅ ՀԱՄԱՐ
Տարեկան \$1.50
Վեցամսեայ 0.85

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան 10 Ֆրանկ
ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Սմբարբույթի և արվեստի
նամակ կամ ծրար ետ
չեն վերագրվում:

ԳԻՆ 3 ՍՆԵԹ:



Հ Ա Յ Ն

Հայրենեաց

ՇՄԲԱԹԱԹԵՐԹ

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն, Գ Ր Ա Կ Ա Ն ԵՒ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

TRAIN
WIRELESS
AN ARMENIAN WEEKLY.
10 MECHANIC STREET,
WORCESTER, MASS.

ՀԱՍԹ
AMERICAN HAI PUBLISHING Co
P. O. Box 379, Worcester, Mass

Entered at the Post Office at
Worcester, as Second - Class
Mail Matter.

Subscription \$1.50 a Year.

ԲԱՆԱԻՈՐ ԿՈՒԻՒՒՆ ԶԵՆԻՒՆ

Մեր դրացի թերթը Հայ Հասարակու-
թյունը մեզի դէմ նախապաշարելու դի-
տուածով շարունակ ջանացած է ներկա-
յացուել «Չայն Հասարակեաց» իր «Կղե-
րական օրկան» ու այս տողերը գրողը իր
«Համակերպող մը»:

Սոսինք սկզբունքի համար:
Մենք սիրած ենք կուր. կուսած
ենք. կը կուրենք. ու պիտի կուրինք
Հայրենեաց շահուն վրայ հիմնուած մեր
գաղափարներուն համար: Սակայն միշտ
ջանադիր եղած ենք որ մեր կուրը ըլ-
լ յ րանաւոր ու մեր գործածած զէնքը
լինի ազնիւ զէնք:

Ամերիկայի Հայերուն բաց ու յայտ-
նի է թէ այս տողերը գրողը ինչ բանի
համար տարագրուած է Հայրենիքէն. իր
տունէն, իր ընտանիքէն. թէ նա Ամերի-
կայի մէջ ուրիշ տարիներ անընդհատ ինչ
կուրենքու շարքերէ անցեր է. կուսած է
իր ներթափանց ապահովող Միսիսի-
սիան զէմ. կուսած է Լուսաւորջա-
կան կղերի զէմ. կուսած է անհայրենա-
ւոր Բողոքականներու զէմ. կուսած է
Ֆրանսիայի կրօնափոխականներու զէմ.
կուսած է յիսուսականներու զէմ. կուսած
է անբարոյական անկրօններու զէմ. վեր-
ջապէս կուսած է իր կուսակցութեան եր-
բեմն պաշտուած պետին զէմ. ու իր
այս բոլոր կուրենքուն մէջ առանց որի
անձնական շահի. զոչնչ է ընտանիք.
հանգիստ. գիրք. պաշտօն. տուժած է
իր ներթափանց յայտնի շահերը, ու այդ-
պէս կերթայ:

Չայն Հայրենեացի մղած կուրենքը
յայտնի են: Բայց թէ ինչո՞ւ նա մասնա-
ւոր խաչակրութիւն չէ յարուցած կղերա-
կանութեան դէմ, (թէեւ անհատ կղերի
դէմ այնքան խստիւ գրեք ենք) ըսենք:
Գեր. Յովսէփ Եպիսկոպոս նոր հա-
սած էր Ամերիկայ: Օր մը Պարոն. Թով-
մաս Չարաֆեան ինծի եկաւ. որ ա-
սան Տիրքիւրը կը հրատարակէր ու այս-
պէս ըսաւ: «Ալ գաղտնիք մը չէ թէ
մենք իմօտոյ թերթ մը պիտի հրատա-
րակենք. եկուր Եպիսկոպոս ինչդիրը
մէկտեղ ձեռք տունենք. զանիկայ այն-
պէս ձաղկենք որ Ամերիկայ չկարենայ
կենալ. փախչի, երթայ»:

Այս առաջարկին իմ պատասխանս ե-
ղաւ. թէ, «Եպիսկոպոսը դեռ նոր հա-
սաւ հոս, նա Պարսկաստանի մէջ բաւա-
կան խելացի ու օգտակար գիրք մը բա-
նած էր. չենք գիտեր թէ Ամերիկայի
մէջ այս անգամ ինչ գիրք պիտի բռնէ
ու ինչպէս պիտի գործէ. չե՞ս կարծեր
թէ մենք իր հրատարակչութիւնը պար-
տական ենք նախ անոր աջակց հանդի-
սանալ, մեր օգտակար համարած խոր-
հուրդները և թելադրութիւնները սալ
իրեն, ամէն կերպով օգնել անոր որ
օգտակար ըլլայ. իսկ երբ մենք մեր բոլոր
օժանդակութիւնը իրեն կուտանք ու վեր-

ջապէս կը տեսնենք որ ինքը Ամերիկա-
յի հայութեան օգտակար ըլլալու արա-
մադրութիւն չունի, այն ասան սկսինք
իրեն հակառակիլ»:

Ուրիշ օր մը նոյն պարտքը վերստին
ինծի կուրացի և փոփոք կը յայտնէ որ մեր
երկու թերթերը միացուենք: Այս առա-
ջարկին ալ կը պատասխանեմ թէ. «Թեր-
թերը նպատակաւ իստուած չեն որ
մեր տարանջնկերը ու մեր տարանջնկերը
մէկ տեղ բերելով միացուենք. իրազե-
րբը գաղափար կը ներկայացնեն, երբ
մեր մէջ ու մեր մէջ գաղափարներու
այդքան անհուն հակառակութիւններ կան
ինչպէս կրնանք միանալ. մասնաւոր գոր-
ծեր լրագրին խումբը կը բաղկանայ ա-
նանկ կարգ մը երկրաստորգրիէ, որոնք
ազնուութեան ամենատարական սկզբ-
բունքներու գիտակցութեան զարկ են.
անհոյս մտքերու և բարքերու ստիկա-
լի ծայրահեղութիւններ են անոնք»:

Ասոր կը պատասխանէ յիշեալ անձը
— «Ճանքմ դուք ալ շատ պահպան
դակոն դարձած էք, կղերականներուն
զէմ երբէք չէք գրել. զանոնք չէք հա-
հարուածներ»:

Եւ կրնամ տեսնել չէք նկատեր թէ
ուսկից յառաջ կուգան մեր կղերական-
ները. անոնք ոչ գեանէն կը ծին. ոչ ալ
վերէն զամբիւղով կը ծինեն, անոնք մեզ-
մէ, ժողովուրդէն է որ դուրս կուգան.
ինչպիսի ժողովուրդ մը ունինք, ինչ բար-
ոյական ու մտաւորական մակարդակ
ունի այն. այնպէս ալ կղերականներ կը
ծնանին անկէ, ուրեմն ուսկի բանաւոր
ու շահաւէտ շքերք, որ փոխանակ առ-
գէտ ու անպէտ կղերականներու ետեւէն
խլուաւ, որոնք զժողովուրդը կատա-
րուած իրողութիւններ են, մեր ազգա-
յին զարաւոր զժողովուրդի միջոցով ու
ազիտութենէն արտադրուած մենք ջա-
նանք ժողովուրդը բարձրացնել, անոր
մէջ ազնիւ գաղափարներ ու ստուղ
բարք մշակել. պայծառացունել անոր գի-
տակցութիւնը, որպէս զի նա սփռի իր
ժամանակի ոգիին, պէտքերուն ու պա-
հանջներուն համապատասխան կղերներ
ծնանիլ, ու սկսի իրեն արժանաւոր կղե-
րը ունենալ, դուք ինչո՞ւ անտես կընէք
ժողովուրդին բարոյական հիւանտութիւն
ները ու մտաւոր ազդեղութիւնները և
չարունակ կղերը առեր անցեր էք, ին-
չո՞ւ չէք աշխատիր որ Ամերիկայի Հայե-
րը սկսին հոս արժանաւոր, կրթեալ ու
հայրենասուէր կղերներ ունենալ»:

Հոն յիշեցի թէ ինչպէս երբ կարգ մը
երկրաստորգրի իրենց ազգա քահանայն
կը ծաղրէին Գեր. Եպիսկոպոսի փոխարե-
նութեան թէ, «Այդ տէր տէրք մեր ազգա
պատերուն տէր տէրն է. անոնք իրենց
ժամանակին զայն գտան ու ձեռնադրե-
ցին, դուք որ ռուսաստանու էք, ո՞ր է
մեր տէր տէրը»:

Ահա թէ ինչ նկատուած է ինչ համ-
ոգուածով վարուած է Չայն Հայրենեացը:
Երբ Ամերիկայի Հայութիւնը սկսեց
իր ժամանակի ոգիին ու գիտակցութեան
համապատասխան, կրթեալ ու հայ-
րենասուէր կղերը ունենալ յանձին Գե-
անգ վարդապետ Մարդակեանի, և
ընկալ մը որ այնքան շնորհաւորի էր,
յայտնի է թէ մեր հակառակորդ թերթը
ինչպէս վարուեցաւ այդ խնդրոյն հետ,
ու ինչպէս շարժուած թիւնով մը ըսաւ
թէ «Նա օր մ'ալ կերթայ կը թրքանայ»:
Այդ մարդկը լաւ ու գէշի գանազանու-
թիւնը չէ որ կը նեն, անոց պահանջածը
կրօնի և կրօնականի ջնջումն է: ու ասոր
չնամակերպութեան կը հոյհոյն: Ահա
թէ ինչ կըսեն. — «Ամերիկայի մէջ կղե-
րականութեան օգտակարութեան շրջա-
նը անցած է... Ուստի եկեղեցիցի վե-
րածեցին վանքի մը, ու մարտի պէս
հոն թափեցան արկայուններ, սարկա-
ւանքներ, անգործ ու գետալիք պատուե-
լիներ... Ուստի երկրաստորգրութիւնը
ինչո՞ւ բողոք մը առաջ պարպել ու մաք-
րել չի տար այդ տեղի անկերպարը, (առ-
աջնորդարանէն վառելի կղերը...»:

Ու այս սխալութեան մէջ անիրաւ
անուանարկութեան և զրգարտութեանց
աղտոտ զէնքը կը դարձած են: Ուստի ա-
ռաջնորդարանի մէջ բայի Եպիսկոպոսն
ու վարդապետն ուրիշ ոչ ոք կայ, և
ս'ի ըսաւ որ անոնք փողոցը մտաւ են,
ընտելու տեղ մը ունենալու են: Իրենց
արտայայտած այդ կերպ սղխվը անոնք
մարդկային ազատութեան զէմ կը դա-
ւաճանեն: Միթէ ժողովուրդը ազատ չէ՞
իր կրօնը ու կրօնական միթէութեան
համար իր կղերականը ունենալու:

Նոյն թերթը ուրիշ խորագրական մը
հետեւեալ խօսքերով կոխի, «Ընէ ինձ ո՞վ
Տէր, այս դեւերն բարի գործ մը ա-
կընդիպել կարելի է... այսպէս ստիպու-
ած է ազգակից Հայ ժողովուրդը իր-
կընդիմութեան համար»: Աւ քիչ մը
առաջ երթալով անիդձ զրգարտու-
թի վրայ, ըսելով, «Պարսկաստանի մէջ
հայ յեղատիականը մասնած էր...» և Եւ
Լուսի հայոցի:

Ու այս բոլոր զրգարտութիւններուն,
բանադրանքներուն և Հայհոյանքներուն
կը յաջորդէ նոյն խորագրին կողմանէ
ստորագրուած Ուէսթ Հոպօքընի ամօթալի
արտաբեր, անիրաւ խօսքերը բաւական
չէին, անոնց կը Հետեւին խորագրա-
կանը՞՞ ստիպանքը և բռնեցնելը...:

Ահա հոս է որ մենք կու գանք այդ
Պարոններուն ըսելու. Գաղափարի Ու
կուր մի աղանդէք. կուսեցէք որքան
կուզէք. բայց ազնիւ զէնք գործածեցէք.
զրգարտութիւնով ու փայտով յարձակու-
մը գործելը Գիւրտութիւն է, անարդար-
անութիւն է. անուանեցէք երբ խճրագիր-

նեղու կողմանէ կըլան: Ազատամա-
թիւն չէ այլ բարբարոսութիւն է ուրիշ-
ներուն ազատ կամքին վրայ բռնաւար:
Նախտեղ, զրգարտել, Հայոցի, ազտե-
ղել ու քանթել գաղափարի կուր մղել
չեն նշանակեր, գաղափարի կուր փա-
թեթաթ ըսել չէ, գաղափարի գիտու-
րը իր կուրենքուն մէջ միշտ պէտք է
բանաւոր ըլլայ, համեստ ըլլայ, ուղղա-
միտ և ազնիւ ըլլայ, լուրջ ըլլայ. անոր
նպատակը լինելու է Հայի, բուժել,
չիտել: Քանզիլու և աղարտելու համար
խելք ու առաքելութիւն հարկաւոր չեն.
բայց շիտելու, որբելու և գարմանելու
համար մեծ շտիպով ընդունակութիւն,
խոստութիւն, մտածում, աշխատանք,
համբերատարութիւն ու զոհողութիւն
պէտք են, այս կերպ աշխատութիւննե-
րու արդիւնքը ուղ կուգայ, բայց վտանգ
կուգայ, չէն կուգայ:

Ահա Չայն Հայրենեացի սղին և ուղ-
ղութիւնը:

Գ. Պ. ՉԻԹՃԵԱՆ

Տէր.

Անձնականիս նկատմամբ ներ-
ճորթի Հայերէն թերթի մէջ սուս լուր մը կար-
գալու գժրազտութիւնը ունեցայ, որպէս
թէ մասնաւոր մաղիկ զրկուած ըլլան
ինձ մօտ համոզելու որ քահանայ ձեռ-
նադրուիմ: Պարս Համարեցի հրատարա-
կաւ յայտարարելու թէ այդ նպատակաւ
ոչ ոք ինձ դիմում ըրած է:

Կը խնդրեմ նաև որ մեր կուսակցա-
կան պարօնները զիրար անուանարկելու
համար ինձ նման խեղճուկի մը անունը
իրի գործիք ծառայեցնելու ստորնու-
թիւնը շնորհակցելու շտի բարեխղճու-
թիւնը ունենան դոնէ:

Կիրակոս Տէր Միսիսիսիան
Լորէնս (Շնդլցի վարժապետ)

Ուստի Հայրենեացի մը 28 սնուկ
զէնքերու Գաղափարական զեղծումը ծած-
կելու այնքան մտկոյն փափաք մը կու
նենայ որ Պալքասեան թղթակցութեան
մէջ ծածկուի հակառակութիւն մը կը զրա-
նէ և Գաղափարի ներքին թերթի թերթ
թիւն կը, գրէ, այդու ամբողջ զեղծումի
իրականութիւնը սուս չ'հանելու հստոր
ստանքով և նոյն խմբագրութիւնն ալ ցն-
ծագին խանգովառուով կը ծափահարէ
այդ գիւտը??:

Կը գրէ — «Վերջ կըսէ զրօշակը կար-
ժէր 25 լիբա ու վարք կըսէ զրօշակին
սակի թեւերն ու սակի խաչը հալելով գո-
յացուցին 60 լիբայ, այս ինչ հակասու-
թիւն. ինտո՞ր 26 լիբայ 60 լիբայ կըլլէ»:
Սա և զրօշակ արարեք բաներ են.
Երբ զրօշակի պարունակած սակին վրայ
աւելցուեն սակի խաչին սակին արդ իւն-
քը այնքան առաւել կըլլայ որքան նու-
ազ է այդ հիւանդ մտքին գաղտու-
թիւնը, որ զրօշակին ու խաչին արարե-
րութիւնը շտեաներ:

Այդ զէնքերը ծախողները իրենց փո-
րն ու քսակը պարարտացուցին, իսկ չենք
գիտեր ինչ կը շահին ատոնց այս ձրի
փաստարանները: Այս ինչ կամա-կուրու-
թիւն է:

պէկ անմիջապէս ձիւն վարկիչն էր վեր
ցունէ, կը գրէ. կը համարուի մանկիկը
ու կոկոխ արտասուել. եւ խօսելով սար-
սափազար հայուհայն իր պաշտպանու-
թիւնը կը խոստանայ անոր. կը միտնա-
րէ կը քաջաբերէ գոյն. կաննէ կը անտի
մօտակայ տան մը մէջ երեխային հետ
մէկտեղ կապահովէ. ու ապա սուր իձե-
ռին կը հասնի շիւսէյնի կոտորիչ վոն-
մակին. որոց քով բարձր տեղ մը գազա
նարարոյ Ձիւֆօ պէկը կանգնած կոտոր-
իչները կը խրախուսէ. երբ Ձիւֆօ պէ-
յը կը տեսնէ իսակ պէյին հանիլը, զայն
կը հրամայուի տունը սուրճ խմելու.
որուն վերջինս կը պատասխանէ. « Գու
սունդ ալ գուր իր ուտէք ու սուրճ ալ.
Հայոց արեւնո՛վը սուրճ պիտի խմցու-
նես ինձի. շուտով վերջ սուր այս
անգթութիւններուն: »

Ահա այսպիսով կոտորածը կը դադ-
րի:

Արդ շարժեր որ մեր երախտագիտու-
թիւնը ու յարգանքը յայտնեմք այս
Թուրքի շիրմին առջեւ. շնորհակալ
ենք թէ նա թուրք էր. շնորհ անոր
« Հանգիստ ոսկերացի. դու թուրք չէիր
դու մարդ էիր. դու մեր բարեբարն ես
մենք կարօտով պիտի յիշենք քեզ երբ
այդ ստակալի օրերը կրկին գաս. » *
Փետր. 23 ԳեղԱՄ

1900 Փետր 22 Խորհրդ
Մէջրա

Մեծապատիւ

Առատուր էՖ. Այվազ
եան և Պատուարժան անդամք. Միու-
թեան կեդր. Ազգ. Գոյէճի. Ի Փրօպի-
անէն և Ի Պօսթօն:

Թարգման Տխարք

Ձեր վերջին թիւ պատուական նա-
մալը ստանալու պատիւ ունեցած ենք.
որով կը ծանուցանէք Միութեան կող-
մանէ. ինամակայութեան օժանդակ մաս
նախորդի 20 Հաս 0 սով. իրկիւնիդ, ո-
րուն 15 ք ինպատակ կեդ. Ազգ. Գոյէճի և
5 քն ալ խնդիր Ազգ. Արարնոցի:

Գոհնքը ըսելու թէ անդոյս երկուս
գոյէճը յառաջդիմութեան մէջէ. օտար-
ներու նախանձը շարժելու աստիճան.
աշակերտաց օր ըստ օրէ բազմապատ-
կուելը միակ և զօրուոր պայտջոյնէ.
գրէթէ 500 երկուս աշակերտներ ունինք
որք 12 ուսուցիչներու ինամոց տակ տոճ
մային դաստիարակութիւն կատարան:

Որքան քաղցր է լսել բարեմաղթու-
թիւնները և օրհնու թիւնները որոնք ման-
կական անմեղ բերաններէ կուղղուին
դէպ ի Աստուած բար պանդուխտ չյե-
րու համար. Ս. Եկեղեցեաց մէջ մասնա-
ւոր աղօթքներ եղան Ամերիկա բնակ
Ազգայնոց գործերուն յաջողութեան եւ
սիրելի հայրենեաց վերադարձի արժա-
նանալուն. սէրը լսէ եւ ողորմի:

Ինչպէս վերը ըսինք գոյէճի աշա-
կերտները օր ըստ օրէ կը շատնան, և ե-
թէ ձեր ու մեր աշխատութեան շնոր-
հի այսպէս շարունակուի մեր այժմու
վարժարանի շէնքը չպիտի բաւականա-
նայ. և ուստի ինամակայութիւնը կը
խորհի շէնք մը շինել օրիորդաց վար-
ժարանի համար և որովհետեւ անդոյս
տնտեսական տագնապը քաջ գիտէք ու-
րեմն այս խնդիրն ալ հիմակուրէն ձեր
լուրջ ու ազդուութեան ինամոց կը յանձ-
նէք:

Ընդունեցէք Պատ. Տխարք մեր շնոր
հակաբան անկեղծ հաւատարմները որով
մնամբ միշտ յարգանքով ի դիմաց Խնակ.
Մեզր. Ազգ. Կեդ. Երկուս Գոյէճի:

Գաւ. ձ. և Հաշտակալ
Ս. Երէցեան

Առնալու պիտի. Առնալու պիտի. Նախագահ
Սահակ Ն. Ասատուր. Յ. Գարեգին Քէն
Պարսամեան. Ժամկոչեան. Վարդանեան
Հաշտեցուցակ Տարեկան Ծախքերու:
Մէզրէի կէդ. Գոյէճի. և Ս. Սանդիս.
Ազգ. Օրիդ. վարժարանի 1898-1899

Հաւանական Եկամուտ Դրժ Փրժ

Աշակերտաց տարեկան թո- շակներէ	14,000
Անշարժ կալուածներուն վարձքերէն	6,000
Երկու եկեղեցիներէն գան- ձելի	4000

Մասնախումբէն գանձելի 4,000
Տարեկան հանդէսներէ 1,500
Գրքերու շահէն գանձելի 2,000
Նպատաներէ այլ և այլ 500
Պիւտէնէն բաց մը կուսե-
նանք 2,812
Գու մար 34872

Իւլք
Վարժարանի սյուստնէից 33812
Այլ և այլ փոյս և ն 1060
Գու մար 34 812

Պիւտէնէն մնացած բացը Ամերիկա բնա-
կուց ազգայններու նախարարութեան
ընդ պիտի գործուի:

ՆԱՄԱԿ ՓՐՕՎՍԵՆՍԻՆ

(Մեր մասնու որ թղթակցին)
Հ. Տնտեսական Միութեան Գրա-
դարանի Զրդ. Տարեգործի Հանդէսը:
(Շարունակութիւն և վերջ)

Միջոցաւ Գրագործի ներկայացու-
ցիչն էր Պ. Գ. Բարիսնեան որ քանիմը
բազէ խօսեցու գրականութեան օգտակա-
րութեան մասին, նաև տեղեկութիւններ
Միջոցաւ Գրագործի վրայով:

Ուրախեցաւ անանկ Փաշտանի, Ուսարի
և Միլիթի քոյր կազմակերպութեանց
համերաշխ գործակցութիւնը ազգայնոց
մէջ կրթութիւն տարածելու սխիւնիւյատ
ակին շարժը. Իցիւ թէ Միտնալ Նահան-
գաց մէջ զանազան ըստ հայ գրագործի
նեբաւ բարի օրինակը ըլլար այս:

Օրուան մասնաւոր աննախօսն էր
Պ. Ազգայնագ Միլիթնեան. ու բնմ հրա-
ուերուցեցաւ, ինքն էր « Հայ գրական-
ութեանը » սիրելի միջնէ մեր օրերը »
յարգելի տանտնաբեր ճարտարօրէն բա-
ցարեց մեր գրականութիւնը անցելուն
մէջ, թուելով այն բեւեռագիր արձանա
գրքն որ մինչցարդ կան վանի մէջ. ինքը
ինկի վանեցի լինելով ի միջի ալ ոչ չէ շե-
տեց վանի վարժարաններին սուսած
օգուտները, ու վերջուց խօսքը յայտնա
բարեկամ որ ընթերցանութեամբ զրա-
ղին:

Տիրին Պէտպէսեան երգեց « Այս հորինեք
օրդ սիրուն... » երգը. Հայրենիքը յի-
շեցնող վաղեմի երգը ու տիկնոջ քաղցրիկ
ձայնը, պահմը հայրենիք փախաղբեց
ներկայք և ի նշան անկեղծ արտայայտու-
թեան բուռն ծափահարեցին:
Վարչութեան կողմէն կանխաւ պատրաս-
տած գրքերու ցուցակով կարգացուցեցաւ
և անկեց գուր ու՛ Տ 200 ընթերցարանին
նուիրեցին (նուիրատուութեան ցանկին մէջ
էին Ուսարի և Միլիթի Գրագործները)
հանդիսականք— շէն մնաւ:

Արժ. Մաշտոց վարչապետ որ եւս
հրատարակեց մասնաւորապէս, ընթեր-
ցանութիւնը օգտակար ընկու քանիմը
խրատականներով վերջացուց իւր խօսքը.
Ու իտես գրուեցաւ Մօզական Լապ-
տերը և յաջորդաբար ներկայացուցեցաւ
Անիի հոյակապ եկեղեցիներու աւերակ-
ները. ու Արքայական շէնք Պալատներու
րեկերները. նաև ազգային ծանօթ գոր-
ծիչներու լուսանկարները: Պ. Սեղաթ
Մամուրեան բացատրութիւնը կուտար
կարգաւով Գանդակուած արձանագրու-
թիւնները և բերանագիտ կենսագրական
տեղեկութիւններ:

ԵՐՈՒՍԵՆ

Կրկին ԲԱՍՏԱՍԱՍՊՈՒՆ ԱՆԱՐԳՆԵՐԸ

Անցեալ կիրակի կէսօրէն ետք Ոստիկա-
նութեան փողովներ կը զրկուին Փոյ կա-
րպակետանի ճաշարանը 39 Հըրմն Փո-
ղոց— քննութիւն մը կատարելու ի մա-
սին սեղիւ հան խաղցուած բարիարա-
ղերու: Փողովները ներս մտնելէն առաջ
բախտախաղքը վերջացան: ու Նարտի
խաղեր սկսուած եղեր են: Հոն կը գտ-
նուին 5 քէյս Գարեջուր:

Նոյն ճաշարանին մէջ քանիցս Փոլ կա
րպակետանի ու Փոյս Ասլանեան գինով
ցուցած են Մովսէս Պեթիկեանը ու անոր
հետ բարիարաղ խաղալով ունեցած բո-
ւոր զրամները կողպտած են: Սակայն
այս այդ անորդ արարածներուն միակ
շտնը չէ, ասոնց գործը եղած է նոյն մի-
ջոցով հայերը կողպտակ Միացեալ Նա-
հանգաց մէջ ամէն կողմ:

Փայտ Ասլանեանի այդ խորհրայ
վարմունքին համար շատ անգամ գրու-

ած է թէ տեղական թերթերու և թէ-
Չայն Հայրենեացի մէջ: Մեզի պարտք կը
համարինք անգամ մը եւս զգուշութեան
ազգարարութիւն ընել մեր հայրենակից
ներուն այդ և այդ կարգի քանի մը ու-
րիշ բարիարաղի անարգ խաբեաներուն
մասին:

Կ. Պ.

ԱԶԳԱՅԻՆ ԳՐՈՆԻԿ

Մանչեսթրի ազգայինք 400 անդլ.
Լիրա դրկամ են Պատրիարքարան ինը-
պատ Հայաստանի կարօտեաց:

Եփրատ Գոյէճի ընթացաւարանից
Անիցի Տխար աւետար ժամկոչեան, այ-
ժմ վաճառական ի Մանչեսթր, 4 տարի
տարին 75 Լիրա պիտի սայ Անիի որրա-
նոցին:

Կ. Պոլտոյ Անիցի քանի մը վաճառա-
կաններ խօսաբար են իւրաքանչիւրը
տարին 20 կան լիրայ սայ Անիի Որրա-
նոցին:

Կարնոյ շուրջը Բասնիի գիւղերը ու
Պոլտոյի մէջ կը օժտուի թեան շարժ
ժուս մը սկսած է. մեծ թուով հայեր
Օրթոսոսութիւն կընդունին:

Կովկասի նահանգապետ հայասնաց
իշխան Կապեյն, որ իր Չարին սեղան
հակահայկական տեղեկագրով ծանօթ է
Չայն Հայրենեացի ընթերցողներուն պաշ-
տանակ եղած է:

Պաշտանակ եղած է նաև Կովկասի
Նահանգապետին Օրկանը եղող Կապեյն
լրագրի խմբագրապետ իշխան Վէլիչի-
որ իր հայասնացի թիւնը ծայրայեղու-
թեան հասուցած էր և վրէժի զրկան
սգրով շարունակ նախատեք կը տե-
ղոր հայոց վրայ:

Այս երկու նշանակելի պարագաները
ու Ռուսիոյ դէպի Հայաստան արշաւե-
լու պարտաւորութիւնները կրնան մեզ
ենթադրել սալ թէ Ռուսիոյ Բազմապիս-
նութիւնը Հայոց նկատմամբ փոխուած է
որպէսզի իր արշաւանքին մէջ Հայե-
րէն օգտուի ինչպէս նախկին ժամանակներ
կուզէ սիրաշահիլ հայերը:

Վերջուպէս Սիւրի Կաթողիկոսական
ընտրութեան մասին հարկ եղած նախնա
կան քոյրերը առնուի սկսած են: Ոսպա
եան Սրբազանը որ ի պաշտօնէ ընտրու-
թեան վրայ հոկեղու պիտի երթար, վեր-
ջին լուրերուն համեմատ Աստուայ ժա-
մանած է: Կըտուի թէ ընտրութիւնը պի-
տի կատարուի Ս. Յարութեան տունէն
առաջ, որ ասեան Երուսաղէմայ վանուց
Լուսարարապետ Գեր. Սպարտան Եպիս-
կոպոս Երուսաղէմ գտնուելու է անհրա-
ժեշտ:

Սուրբանին կողմէն ալ ընտրութեան
հրահրու պաշտօնով թուրք Կրօնական
տեսչութեան պատուիրակ Պեհու պէյ
Աստուայ հասած է:

Յիշեալ երկու անձնաւորութիւններն
ալ այժմ Սիւր հասած ըլլալու են, նկա-
տի առնելով մեր ձեռքը հասած Լուրե-
րուն ճամբորդութեան ժամանակամի-
ջոցը:

« Արեւելքի մէջ ծանր գանդատներով
լի նամակներ կան Սարբերդէն տեղւոյն
բռնի առաջնորդ բռնապետ ու անպետ
Պեսարոս վարչապետի մասին:

Սարբերդցիներ լաւ կը ճանչնան
այդ պիտութեան ու անձնական քմահա-
ճոյցը գռեհիկ քուրմը:

Սարբերդէն հոս եկած շատ մը տն-
հատական նամակներ ալ լեցուց են ծանր
գանդատներով. այդ Սփինքը նստեր
խափաներ օգտակար առաջնորդի մը
տեղը. քանի այդ կմայքը կը շարժի,
խարբերդցին լաւ Առաջնորդի մը երեսը
չպիտի տեսնէ. առկէ զատ, Պեսարոս վար-
չապետի գործած զեղծուիները, ստու-
կոնիւրով եկեղեցական ամէն կարգ ու
կանոն, կը հասնի մինչև որրերուն ու
կարօտեակներուն զրկուած պատակի
մը հացին:

Սարբերդի ազգայնները այդ պաշ-
տանական շարժքէն ազատեան համար,
այս ազատ երկրին մէջ եղող խարբերդ-
ցիները ինչ կը մտածեն:

Սիւրի Կաթողիկոսական ընտրութեան
մասին սխալ հասկացողութիւն մը կրե-

ւան եկած ըլլալով. Օրմանեան Պատրի-
արքը հրատարակեց Մարտ 22 ին. յաջորդ
օրը ըլլալը կանչուած է, բայց այդ իւն-
քը յայտնի չէ:

Հանելուկի Պատասխանը
29 րդ, թուսն մէջ եղող հանելուկին
ճիշդ պատասխանած են Փրօպիտէնէն
Պ. Պ. Մարտիրոս Պաղտիկեան և Գրիգոր
Նահիկեան որ է « ԵՐՈՒՍ ԵՐ »

ՔԱՂԱՔԱԿԱԾ

Կ. Պոլտէ քաղաք Ապրիլ 1 թուա-
կիր հեռագրի մը համեմատ, Թուրք կա-
ռավարութիւնը հաւանած է շնորհու-
նէր ընել Ռուս կառավարութեան ի մա-
սին շինութեան երկաթուղւոյ գիծերու
Սև Մովսէմ մօտ նահանգաց մէջ, զորս
վերջինս պահանջած էր այնքան կորովա-
ւոր կերպով Սուրբանին:

Պաղտասի երկաթուղիներու մասին
կոյց փաշա յողուած մը կը զրէ Եւրո-
պական հանդիսի մը, որուն մէջ կրէ թէ
Սուրբանը իր մէկ խնդրած է որ իմացու-
նէ Պերլին, թէ ինքը (Սուրբանը) կը հա-
մակերպի Գերմանիոյ ծրագրին. որ է Փո-
քրի Ստիպ մէջ Գերման գաղթականներ
հաստատել:

Անկէ օրէ պատերազմին երեսը
կրկին ստիպուի կըսուի. Անգլիական վեր-
ջին փառաւոր յաղթանակներուն վրայ
Պօլտնըր ամէն կողմէն նահանգի ըսող
սեցին ու անոնց սղին սկսած էր լսելու.
Իր գլուխ գործոց այս դժբաղտութեանց
մեծաւ անոնց դիւցալուսն Զորավար ճու-
պերթ:

Զօր. ճուպերթի տեղ յաջորդեց Զօր
Պօթա. երիտասարդ բայց հմուտ ու
համճարեղ Ռազմադէտը, որ իր վրայ
գրուած յոյսերը արդարացուց և արակց:

Մինչդեռ Անգլ. գորադուցող դէպի
եա կը քալեր, յանկարծ ինքզինքը դուս-
Պօլտնըրու մէկ անկեղծ թակարդին
մէջ օգտուի ինչպէս նախկին ժամանակներ
կուզէ սիրաշահիլ հայերը:

Պօլտնըրու կողմէն տարուած այս
մեծ յաջողութիւնը պատճառ եղաւ ա-
նոնց ինկած ողին բարձրացուելու յու-
սովաբեւ և անոնց ինքնապատահու-
թեան ողին զօրացնելու:

Պօլտնըր կըսուին յարձակողական
դիրք առնել: Նախագահ Բրուկը վճառ-
պէս կըսէ թէ մէկ շարաթէն ետ պիտի
ստանայ Լօրտ Բօպլթի գրաւած ա-
ղաս նահանգներու Մայրաքաղաքը:

Զարք Մոսկուա գացեր է հոն տեղի
ուսնելու պատերազմական խորհուր-
դին ներկայ լինելու:

Գործի Լաւ Պատահութիւնը
Կուգամ յայտարարել յարգայ հայրե-
նակցաց թէ Փրօպիտէն 304 Տնն Ըսթր.
Սպիրիշի խանութս կուգեմ ծախել ո-
րովհետև ուրիշ խանութ մը բացած եմ
և չեմ կրնար երկու խանութ բռնեցու-
նել: Այս խանութը 12 տարին կը քիթ
Սպիրիշի խանութ եղած է եւ կը փոտա-
հացնեմ որ գործը գիտցող ստորից մը
կրնայ շարժական 12 Տօլար շահել.
ծախել սղիտուած ըլլալով զինք շատ ա-
ժան պիտի ընեմ: Մանրամասնութեանց
համար դիմեցէք առ:

Պեսարոս Կըջագճեան
724 Վէսթ. Միլիթերը Փրօպիտէնս

ԿԸ ՓԸՆՏՈՒՄԻՆ

Կը քննադատին Պրնք. Հաճի Յակօր
Աշեան և Տիգրան Վարդիկեան (Սար-
բերդցիներ) ասոնք 97 ին ընկերակցու-
թեամբ Ուսարի մէջ Յաւնթէյն Փողոցի
ճաշարանակետներն էին: Կըսուի թէ
առաջինը Նիւ Եօթը, իսկ երկրորդը Պո-
թոնի շըրջականները կը բնակի: Հասցէները
գիտցող հայրենակիցներէ կը խնդրուի
տեղեկացնել նախկին նպարտվածաւ
եղիւայ Կ. Գառապեանի:

242 3 FRONT ST.

ՈՒՍՏՐ ՄԱՍ

Յառաջիկայ կիրակի Ս. Գրիգոր Լու-
սաւորչի Տօնն ըլլալով Արժ. Տ. Դեռնդ
Վարդ. քարոզ պիտի խօսի



Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ
Մ Ե Մ Ա Ք Ա Ն Ա Կ Ե Ն Ի Փ Ո Ք Ր Ա Ք Ա Ն Ա Կ
Ս . Տ Ա Մ Պ Ո Ւ Ր Ա Ճ Ե Ա Ն
Ն Ի Ե Կ Ե 509 2 րդ . Ա Վ Ի Ն Օ

Տեղական և Արևելյան բազմաան-
սակ նպարեղեններ, լաւագոյն տեսակ
ընդեղեններ, եղանակին համեմատ բան-
ջարեղեններ և ստորեայ թարմ միս: Հայ-
կական սրահներ, սուրճ 13 սէնթ մեծա-
քանակ գնողաց 12 սէնթ. Ուստրի պա-
տուական Պլուր և Մեծած փաւուսը 3
սէնթ մեծաքանակ գնողաց համար 2½,
2½ թաւաղուղ (զէյթուն) փաւուսը 10 ս.
մեծաքանակ գնողաց մասնաւոր զեղջ
կրնեմ, 5 փաւուսի քէն սալայ համար 25
սէնթ մեծաքանակ գնողաց 20 սէնթ հա-
տը: Մեր քով միշտ պատրաստ կայ
Հայկական ամեն տեսակ ապրանքներ, ա-
ղը զբուսած եսփրաղ, ընտիր կորկոս,
անթապ հալլասի, կանանչ զէյթուն .
Չէյթուն եաղի (ընտիր տեսակէն) մա-
քառանի լօբու մ տեսակներով, սպա աղ-
ջուած կամ չաղջուած, սուճախ, սիսեռ
Պօլոյ խաշար պանիր, լէպլէպի շաքա-
րի տեսակներով, քիմիօն, անասոն, պա-
տուական խունկ. աղւոր ալիւրէ հաց
2 հատը 5 սէնթ, և այլն... Նամակով ե-
ղած յանձնարարութիւնք փութով և քիչ
վարձքով կը կատարենք մեր յատուկ
կատարում: Իճարու մեքեր կանխիկ են և ոչ
ապարիկ:

Ս.Ո. ՉԵՌՆ ԲԱՌԱՐԱՆ
ԲԱՌԱՐԱՆ
ԱՆԳՆԻՔԻՆԵ ՀԱՅԵՐԷՆ
Գարունը նոր կեանք կը բերէ բնա-
պէս, Ս. Չառիկը նոր կեանք կը բերէ
բարոյապէս. Սոյն Բառարանն այ նոր լի-
զու մը կը բերէ ձեր տունն իրապէս: Քի-
նըն է \$ 2.50:
Չառիկի առթիւ պիտի զրկենք ար-
տաքոյ կարգի զեղջով մը, այն \$ 1.75 ի
առիթիչ օգտուի ուղղով թող հաճի
դիմել առ Պ. Ռ. Թորոսեան
564 Clinton Avenue,
West Hoboken, N. J.

ՆԵՐՇՆՉՈՒՄՆԵՐ
ՄԻՀՐԱՆ, ՏԱՄԱՏԵԱՆԻ
ԵՐԳԵՐ
ԱՉԿԱՅԻՆ ԵՆ ԵՆԱՓՈՒՆԱԿԱՆ
ԱՐԴԻ ԿԵԱՆՔԻ
ԳՐԻՆ 25 ՍԵՆԹ
Ուրիշ քաղաքներու համար փոստի
ծախքը իրենց փայ է:
Դիմել .
S. RUSDIKIAN,
P. O. Box 46, Station A,
WORCESTER, MASS
Նաև
Պատոն Պ. Ա. Մազանազի և
Բրովիան Պ. Մ. Տէր-Պողոսեանի քով:

ԿԱՐԵՒՈՐ ԱՉԴ
Ճաշակի յարմար պատուական ապուխտ
(Նայսէրի Պատրմոյ) կը պատրաստ
տեմ. գրին է՝ փաւուսը 35 սէնթ. վա
ճառման կեդրոնատեղին՝
S. ՍԵՄԵՐՃԵԱՆ
113 TYLER ST BOSTON MASS.
Մ Ե Ր Ն Ո Ր Հ Ա Ս Ց Է Ն
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ . ՀՐԱՍ . ԸՆԿ .
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
AMERICAN HAI PUBLISHING CO.
P. O. Box 379,
WORCESTER, MASS

Մեր գործակալներէն կը խնդրենք
որ հաճին Ձայն Հայրենեացի քովերինի
աւելցած 25 թիւերը մեզ զրկել:

ԱՉԴ
Կը ծանուցանենք Հայ հասարակու-
թեան թէ՛ Պատմիկ Թայլըր փողոցին մէջ
նոր խանութ մը բացած ենք, ուր կը վա-
ճառուին ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԸՆՏԻՐ ՆՊԱՐԵ-
ՂԷՆԵՐ ՉԱՓԱՌՐ ԳՆԵՐՈՎ:
Յանձնարարութիւնք կը կատարուին
փութով և խնամով:
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ
ԱՐԱՄ ԱՍՔԱՆԱՉ
Մեր հասցէն է
Tyler Grocery Co.
113 Tyler St. Boston, Mass.

ԿԱՐ ԿՊԵՏ Յ . ՓՈՓՈՉԵԱՆ
NEW YORK
LIFE INSURANCE CO.,
ՆԻՒԵՐՔ ԿԵՆԱՑ ԱՊՈՆՈՒՄԱՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Գործակալութիւնը ըս-
տանձնած է, և անձամբ կամ նամակա-
կրեն զիմոցները կապահովագրէ ճիշդ
և ուղիղ պայմաններով:
Նիւ Եօրք կենաց ապահովագրական
Ընկերութիւնը աշխարհի ամենէն մեծ
միջոցաբային ապահովագրական ընկերու-
թիւնն է, 82 կառավարութեան հանչու-
ած և անոնց Օրէնքներով վաւերացուած:
Այս նիւթի վրայ պատրաստած ե՛մ
համառոտ տեղեկութիւնք մը կը զրկեմ
ամեն անոնց, որոնք կը շահադրգուին
այս խնդրով և կը փոփոխեն սրջ տեղե-
կութիւններ ստանալ:
G. H. Papazian,
15 Temple Place,
Boston, Mass.

Խ . Թ . ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
ՎԱՐՃ ՈՒ ՓՈՐՉԱՌՈՒ ԴԵՐՉԱԿ
Պատուէրով հանդերձ կը շինենք, թէ
Արանց և թէ Կանանց, նաև կը ներկենք,
կը մաքրենք, կարտուկենք ու կը նոր-
գենք:
Փութով ու շատ աժան:
7 Պրիմ փողոց
Յորթթ փողոցի անկիւնը
Ուստր
Իրիկանները բաց է:

ՀԱՅ ԳՐԱՎԱՃԱՌԱԿԱՆ
ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Պօլոյ, Վենետիկի, Մ . Մամուրեանի
և Տիկին Բաֆֆիի հետ մասնաւոր կարգա-
դրութիւն ըրած՝ նաև ուրիշ գրատուններէ
ալ զբերքը բերել տալու միջոցները ձեռք
բերած ըլլալով կուգամ գրատէր հայրե-
նակիցներու ծանուցանել թէ իրենց փա-
փաքած զբերքը սովորական գնով կարճ
ժամանակի մը մէջ՝ բերել տալու պատ-
րաստ եմ. քիչ ժամանակ վերջը մեր
քով արդէն պահեստի պիտի ունենանք
ամէն ժողովրդական գրեանց շարք մը:
Փափաքողաց գրացուցակ կը զբերենք:
Մեծ քանակութեամբ գրեանքներու՝
մասնաւոր զեղջ կը ներկենք:
Դիմել Խ . ՊԵՏԻՇԵԱՆ
390 փ . Օ . ՊՕՔԱ
ԼՕՎԷԼ ՄԵՍ .

ԲԱՑՈՒՄ Է
ԲԱՑԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
«ՉԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ»
Բ . Բ . Վ . Ե . Գ . Ը . Թ . Ն . Ս .
Ներկա թուէն մինչեւ Սեպտեմբեր 85
սէնթ: Սեպտեմբերէն անդին բաժանորդ
չենք ընդունիր: Նոր բաժանորդագրուիլ
ցանկացողները մեզ զրկելու են 85 սէնթ:
ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Ստալագրաբար կը խնդրուի որ բարե-
հաճին զրկել իրենց հաշիւները, մինչեւ
երկայ 26 րդ . թիւը:

ԼՈՑՍ ՏԵՍԱԿ
ՇԱՐՃՈՒՄԸ ԿԵԱՆՔ Է
ԵՆ ԿԵԱՆՔԻ ՇԱՐՃՈՒՄ
Հրատարակութիւն «Ամերիկայի Հայ
Հրատարակչական Ընկերութեան» (Թիւ 1)
Գիւն 10 ՍԵՆԹ
Դիմել վարչութեան հասցէին:


ԿՈՒՉԷՔ ԴՐԱՄ ՓՈՒՍԴԻՐԵԼ
Դիմեցէ՛ք Առ՝
Սարգիս Գ . Սարգիսեան
1060 փ . Օ . Պօքս , Ուստր , Մաս .
Դրամ կը փոխադրենք թիւրքոյ բու-
լոր քաղաքները: Կեդրոնատեղին է Նար-
բերք, Տեար Յովհաննէս Նարբուղեան,
որ երկար տարիներու գործունէութեամբ
և վարկով հանրածանօթ է և Կ . Պօլոյ Տ .
Գէորդ Նարբուղեան: Մեր Գործակալ
ներն են . Մայրթեա Սարգիս Պօնչուգ-
լեան . Չմշկածակ՝ Մէյրիկէյր Ինճէյ-
եան . Բալու՝ Գարեգին Բիւրճեան .
Չնքոյ՝ Յակոբ Տաղալիկէան: Թիւրքի-
ոյ ուրիշ բոլոր քաղաքներն ալ դրամ կը
փոխադրենք Նարբուղի միջոցաւ:
Մարտի 1 թէ հեռագրով եւ թէ նա-
մակով դրամ կը փոխադրենք և նաւա-
յին տոմսակներ կու տանք:
Ուստրի մէջ կը վաճառենք պամեա
սիկարի թուղթ և ուրիշ շատ տեսակ
Տաճկական ապրանքներ:
Նանութիս հասցէն է՝ 14½ Արշ Սթ .
Ուստր . Մաս .
ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ . Մեզ դրամ վեր-
կելու է Մեր Օրարով, կամ Պանքայի
չէքով:

ԴՐԱՄ ԿԸ ՓՈՒՍԴԻՐԵԼ
Ումերիկայեան Հայ դաշխակալութե-
ան կուգամ յայտարարել որ հայրենիք
դրամ փոխադրելու դիւրութիւն ընձա-
յելու համար, փոխադրի նոր գործով
սկսած եմ ի Պօքս օն՝ շատ մը բարեկանե-
րու ու ծանօթ հայրենակիցներու թա-
խանձանայ գոյացում սուրու . աւելորդ է
ոչինչ գովասանք ընել Նարբուղի ինչ-
պէս նաև Տիգրանակերտի մէջ հաստատ-
ուած Պէրպէրեան կարգայն անվարկին
ու վտայութեան նկատմամբ . ինչ որ
արդէն երկար տարիներէ ի վեր կը վախ-
են, պէտք եղած վտայութիւնն ու վար-
կը գործի հրապարակի վրայ: Գործը
պիտի հաստատուի ու վերջի վայ , եւ
այս համ րձակութեամբ կերպարարիմ
ամէն անոնց, որք կուզեն փ . գրի գործ
ինձ հետ: Օտմ . Լ . \$ 4.50 կն կուտանք:
Մասնաւոր գործակալներու ունինք Նար-
բերք, Մայրթեա, Տիգրանակերտ, Սեբաս-
տիա, Նուբէյ, Կ . Պօլոյ և Մարտիլիա ինչ
պէս ուրիշ այլ և այլ քաղաքներ: Մար-
տիլիայէն եկողներու դրամի և այլ պիտ
քերու մասին խնամք և դիւրութեան
միջոցներ կընձեռենք: Հայրենաց քաղաք-
ներու դիւրութեան ընծայելու համար
երկու գործակալներ կը նշանակուին որոնց
կրնան դիմել . Ուստր . Պ . Գրիգոր Մար-
գարեան . 167 Սթ . Սթ . Նիւ Եօրքի և
Նիւ Ճըրզիի Պ . Մարտիրոս Թաճեան
251 Ուրիշ Սթ . Նիւ Եօրք
Ինձ նամակ և դրամ զրկողներ պէտք
է հետեւեալ հասցէով թղթակցին՝
P. O. Box 2652. Իսկ զիս անձամբ
տեսնել ու զգուշեր կրնան դիմել՝
344 Cambridge St.,
Boston, Mass.
ՅՈՎՀ . Մ . ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՃՈՒՆ ԵՆ ՀԱՐՈՒՍ ՃՄՇԱՐԱՆ
Թ . ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ
Յիշեալ ճաշարանն որ կը գտնուի 11 քարլ
փողոցը . ամէնէն լաւ և ընտիր կերակու-
րներ կը պատրաստուի համարողաց հա-
մար 12 . 13 . տեսակ մսեղենով և սովոր-
ուղով հոնքերձ, նոյնպէս փեղերն կը
պատրաստուի 4 տեսակ փայ միս պանիր
և մրգեղեն . հալը ուղածուէն չափ առատ
է, ուստի այն հայտարարութեամբ կը
ծանուցանեմ յարգելի հարատարութեան
ով որ կուզէ համեղ և ընտիր կերակու-
րուէն կրնայ փորձել . աղքատները նաև
կը կերակուին ձրի ըստ կանօնի: Սեն-
եակ ուղղաց համար լաւ մաքուր սեն-
եակներ \$ 2 ուսեւ և պառկիլ իսկ \$ 2.25
սենեակին համեմատ: Փորձեցէ՛ք և գոհ
պիտի մնանք:
Ճաշարանապետ
Թ . Մամիկոնեան

ԱՆ Ա Հ Ի Տ
Հանգիս Աղղային, Գրական և Գե-
ղարուեստական . բացուած է Բրք . ապր-
ուայ Բաժանորդագրութիւնը:
Հասցէ
ԱՐՇԱԿ ՉՊԱՆԵԱՆ,
6 ԲԼԷՍ Տը ԼՕՈՒՅՕՆ Բարիք

ՓԱՐՄԱԿՈՒԹՅՈՒՆ
Փաթեղարարի մէջ Հայ . Գող . Միւս-
թիւնն սարիլ 7 ին շաբաթ զիշեր խնջոյք
մը պիտի սայ Պաքս Փարթի Սընթ ձոր-
ճա շօլ . Մարքէթ և Չրըշ փողոցներուն
անկիւնը, ուր ինչպստ տեղի ոյս ծողի-
ցին ձեռնարկուած վիճակահանութեան
խնջիլին ևս վերջ պիտի գտնէ:
Տիկնանց և աղայց համար մուտքը
ձրի է . իսկ արանց համար 10 սէնթ մի-
այն . վիճակահանութեան մասնակցող
անձանց ևս ձրի է:
Ուստի սիրով կը հրաւիրենք երկուս
աղղայիք ներկայ գտնուիլ այն ազգօ-
գուս ձեռնարկին:
Յանձնարար .



ԱՐՄԱՆԱՆ ԵՂԱՐԱՐ
Օղի և Մասիլ քայլի Պատրաստողներ
Արեւելեան օղիի և Մասիլ քայլի անդ-
րանիկ և միակ գործարանը ունինք Մ .
Նահանգաց կառավարութեան վաւերաց-
եալ:
Միայն պատուական խաղողէ և չա-
միչէ կը պատրաստենք: Մի խմէք օտար
և անտարժ քիմիկներ, որ չիլաւուիք:
Խմեցէ՛ք հայրենիքի գուտ օղին և մաս-
թիլքան, որ խնամքով կը մասալարա-
րենք:
Խմէ՛ք որ և է հայ մը մանուսնք հայ
բժիկներ կրնան վաւերացնել ամենա-
փոքրիկ խաղալաւու իւր մը մեր բժպե-
կաց մէջ, պատրաստ ենք իրենց փորձե-
րուն համար բոլոր ծախքեր և 500 տուրք
ալ գրաւ մճարել:
Ուստիցիներ կրնան ստանալ օղի և
մասիլքան 111 Summer St ի ըմպելաց
մեծ վաճառատունէն:
Ուրիշ քաղաքաց հայեր կրնան դի-
մել կամ գրել ուղղակի մեր գտարանը:
Abraham Bro's
20—22—24 Back St.
Providence R. I

ԱՉԴ
ԸՆՏԻՐ ՊՈՒԼՈՒՐ
Ուստրի մէջ երկար տարիներէ ի վեր
հաստատուած ենք մեր յատուկ պալատի
գործարանը: Սոյն գործին մէջ մեծ փոր-
ձառութիւն ունենալով, ամենայաւ ցո-
րկնէ կը պատրաստենք ընտիր պալատի,
որ իր մաքրութեամբ և ուրիշ լաւ յատ-
կութիւններով ստանալիքներու և ճա-
շարանատեղիներու գնահատութեան ար-
ժանացած է: Կը պատրաստենք նաև նոյն-
պէս ընտիր ձեռած և կարկաս:
Ուստի ամեն ով որ կուզէ ընտիր և
սխորժահամ կերակուր լինելու պալատի
և ձեռած ունենալ, թող դիմէ ուղղակի
մեզ: Ապագայից քիչ փութով կը կա-
տարուին . մամրամասն տեղեկութեանց
համար պէտք է դիմել հետեւի հասցէին:
Ուստր, Պալատի Միացեալ Ընկ .
151 ի . նիւրն սթ . , Ուստր Մաս .
Տաճկական տեսակ տեսակ ապրանք-
ներ ալ կը ծախենք:
ՄԱՐԹԻՆ, ԳԻՆՕ
ՀԱՅ
Վաճառանոց տեսական ամեն կարգի
կաճ կարտուայ:
Հայերը սակէ պատուածողոյն տեղ
չեն կրնար գտնել, գրեալ մասճակալ,
մեթիլ, ս . սեղան, ջիւսոց, կարպիս և որ
ի կարգին:
Հասցէն է՝
MARTIN KEENOW
79 Green St. : Albany N. Y.